Վարկ տրամադրելու դրական որոշման և վարկի մերժման գործոնները

Վարկային Կազմակերպությունը տրամադրում է վարկեր հետևյալ հիմնական պահանջներն ապահովելու դեպքում.

- վարկունակության և վարկարժանության առկայություն,
- դրական բնութագիր և վարկային պատմություն (առկայության դեպքում),
- վարկի մարման համար անհրաժեշտ եկամտի կայուն աղբյուր, ապահովվածության առկայություն և(կամ) ձևավոևված շրջանառություն:

Վարկային Կազմակերպությունը չի տրամադրում վարկեր, որոնք՝

- օբյեկտիվ չափանիշներով դասակարգված են կասկածելի կամ անհուսալի,
- վարկի ստացման նպատակը հսըակեցված չէ,
- մտադրություն կա վարկի գումարը օգտագործել այն շրջաններում, որտեղ չկա կամ սահմանափակվում է Վարկային Կազմակերպության կողմից այդ միջոցների օգտագործման վերահսկողության հնարավորությունը,
- տրամադրվում են անհասկանալի, անորոշ ծագում ունեցող և մասնագիտացված սարքավորումներ ձեռք բերելու համար, որոնց շուկայական արժեքը անհնարին է կամ դժվար է որոշել,
- ապահովված են արվեստի գործերով,
- նախատեսված են օրենքի պահանջներին հակասող գործարքներ իրականացնելու համար,
- նախատեսված են քաղաքական պաշտոնների թեկնածուներին և քաղաքական կազմակերպություններին՝ քաղաքական միջոցառումներ իրականացնելու համար,
- նախատեսված են տնտեսական և ֆինանսական գործունեության ոլորտում կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող, հափշտակության հետ կապված, ինչպես նաև Վարկային Կազմակերպության կարծիքով կասկածելի հեղինակություն ունեցող անձանց համար,
- նախատեսված են անվճարունակ, կասկածելի հեղինակություն ունեցող, ինչպես նաև կասկածելի հեղինակությամբ ղեկավարություն ունեցող ձեռնարկությունների համար,
- նախատեսված են սնանկացման գործընթացում գտնվող անձանց համար,
- նախատեսված են անգործունակ ճանաչված անձանց համար,
- նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ արգելված կամ չլիցենզավորված գործունեության վարկավորման համար (օրենսդրությամբ սահմանված լիցենզիայի պահանջի դեպքում),
- շահումով խաղերի բիզնեսի համար,
- արժեթղթերի հետ կապված գործարքներ իրականացնելու համար՝ բացառությամբ պետական պարտատոմսերի և ԿԲ կողմից թողարկված արժեթղթերի գործարքների,
- չունեն ապահովվածություն: